

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՈՅԱԳԼ;Տ. ԼՈՒԻՍ ՄՈՐԵԼՈ

LOUIS MARIES

ԱԵԱՆՔԸ, ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

ԵՒ ՆՐԱ

«ՀԱՅԱԿԱՆ ՄԾԱԿՈՅՑԹԻ ԿՐԻԱԿԻ ԲՆԱՑԹԻ ՄԱՍԻՆ»

ԱՆՑԻՎ ՅՈՒԹԱԾԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ*
ՄՈՐԵԼՈՅԻ ՀՈՅԱԳԼ;ՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԱԽՐԱԿՈՒԹԻՒՆԵՐԸ

Ա. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. Հիպողիսոս Հռոմայիցի

8. Hippolite de Rome (scripsit 200 - 233). Sur les bénédiction d'Isaac, de Jacob et de Moïse. Note sur la tradition manuscrite: texte grec, versions arménienne et géorgienne, Paris, Les Belles Lettres, 1935, 62 p.

Հիպողիսոս Հռոմայիցի (գրելէ 200-233թթ.). Իսահակի, Յակոբի և Մովսեսի օբնութիցների մասին: Στολήκαιούθիւններ յունարէն բնազրի, հայերէն և գրացերէն թարգմանութիւնների ձեռագրերի ժամանակ: Փառք, 1935, 62էջ:

Հիպողիսոս Հռոմայիցին կարևոր տեղ է գրաւում՝ հայրաբանական գրականութեան մէջ, որովհետեւ նա է առաջին անգամ լուրջ և ժամանագիտորէն մեկնարաննել Ա. Գիրքը: Ասկայն նրա բոլոր գրաւածքները և մեկնութիւնները լոյն տարածում չեն զահել և (յունարէն) բնազրերավ չեն պահպանուել Արեւմուտքում: Ի տարիքիւթիւն տրեելիոն քրիստոնեայ համայնքների, որ գրանք մեծապէս զնահատելով՝ թարգմանել են տարերէն, հայերէն, գրացերէն, արաբերէն և ուրաւաներէն:

Ա. Գիրքի այլ համաւածների շարքում՝ Հիպողիսոսը մեկնարաննել է նաև Իսրայէլի տասներկու ցեղերէն իսահակի, Յակոբի և Մովսէսի տաւած օրհնութիւնները, առաջին երկուսինը՝ միասին, Մովսէսինը՝ առանձին: Այդ մեկնութիւնները ժամանակին թարգմանուել են հայերէն, որից և գրացերէն, ինչպէս ապացուցաւած է Մարիէլը, երկու ուրիշ բանասէրի աշխատակցութեամբ, 1954ին մէկ հատորում՝ գիտական հրատարակութեամբ լոյն ընծայեց մեկնութիւնների արեելիոն երկու թարգմանութիւնները ու միայն իսահակի և Յակոբի օրհնութիւնների մեկնութիւնների յայտնաբերուում՝ յունարէն բնագիրը՝ ամբողջի իր քրանուերէն փախադրութեամբ և ծանօթագրութիւններով: Ահա այդ քննական հրատարակութեան գիտական նոխագոտարարաւումն է «Իսահակի,

* Եարաւակութիւն՝ ԱիԱՆ, 1974, թ. 3-6, էջ 131:

Յակորի և Մագսեսի օրհնութիւնների մասին» նրա համառատ ուսումնասիրութիւնը, որ ներկայացնում ենք:

Հին բնոգրի ամէն գիտական հրատարակութիւն պահանջում է բնոգրի բարոր կամ հիմնական ձևագրերի ճշգրիտ նկարագրութիւն և գիտական համեմատութիւն, լուրջ ուսումնասիրութիւն, համակողմանի քննութիւն, թարգմանուկան բնոգրի գիպֆում բազգատութիւն սկզբնագրի հետ, եթէ պահանջում է, և այլն: Յանսոսիրական աշխատանքի քայլածեղեակ. Մարիէսը նախ նկարագրել և քննութեան է տաել խառնկի, Յակորի և Մագսեսի օրհնութիւնների հիմնագիտական մեկնութեան հայերէն թարգմանութիւնների երկու ձեռագրիք սրոնք այն ժամանակ մտաշելի են եղել նրան: Զեռագրերից մէկը պատկանում է Երևանազմի Ո. Յակարեանց վանքին. նկարագրութիւնն ստացել է Բարիէն նզու. Կիւէսէրեանից. ձեռագրին այն ժամանակ կրել է 347 թուահամարը: Միւս ձեռագրերը պատկանում է Վենեսարիկի Մխիթարեաններին, սրոնցից ստացել է նկարագրութիւնը. այն ժամանակ կարգահամարը եղել է 352: Այս ձեռագրի գրչութիւնը ուսումնասիրելով՝ Մարիէսը նկատել է, որ գրիչը երբեմն չփոխել է Մ և Ս առանքը. ուստի, նո եզրակացրել է, այն հաւանաբ որ ընդօրինակաւել է երկաթազիք մի հնագոյն ձեռագրից, քոնի որ միայն այդպիսի օրինակից արտագրելիս կարելի էր խառնել այդ երկու գրերը: Եթէ այս եզրակացութիւնը ճիշտ է, նկատել է տաւշի Մարիէսը, ապա վենետիկի թ. 352 ձեռագրերը կարելի է համարել առնաւազն իններորդ գաղցից:

Նկարագրուած հայերէն երկու ձեռագրերում, ուր կան նաև այլ գրաւածքներ, խանակի և Յակորի օրհնութիւնների մեկնութիւնը նոյն հատուածում է՝ «Հիպաղիտեայ յօրհնութիւն» Յակորայ, որ զերկատառն նահապեածն աւքնեաց: իսկ Մագսեսի օրհնութիւնների մեկնութիւնն առանձին է՝ «Հիպաղիտեայ մեկնութիւն աւրհնութեանցն» Մագսիսիոյ յիրկատառն ազգաց: Այսոյն Մարիէսը փառակել է, որ երկու հատուածները նոյն երկի երկու գրերը կամ պրակներն են: Ես չի կասկածել, որ հայերէն ձեռագրերում հեղինակային վերագրումը ստոյգ է: Չի կասկածել նուե հայերէն թարգմանութիւնների վաւերականութեան վրայ և թուել է այն աշխատաւթիւնները, սրոնցում յիշատակաւած են վերայիշեալ հայերէն երկու ձեռագրերը: Միւս կողմից կարագացել է պարզել, որ հայերէն երկու ձեռագրերը նոյն թարգմանութիւնը չեն ներկայացնում և գիտական նոյն արժեքը չունեն բնագրի հարազատ և ամբողջական թարգմանութեան տեսակէաց:

Եթի՞ խանակի և Յակորի օրհնութիւնների մեկնութեան ժաման: Եթեք նոհապեածների օրհնութիւնների մեկնութիւնների հայերէն թարգմանութեան շնորհիւ նիկողայոս Մարը նախքան 1935թ, երբ լոյս աեսու Մարիէսի յօրուածը, յայտնաբրել էր գրանց վրացերէն թարգմանութիւնը, որ, ինչպէս պարզուած է, հայերէնից է կատարուած: Վրացերէն թարգմանութեան երկու ձեռագրերն են Թիֆլիս թ. 1141 և Երևանազմ թ. 44: Այս գիւտի չնարհի յայտնաբրեւեց միայն Խանակի և Յակորի օրհնութիւնների մեկնութեան յաւնարէն սկզբնագրերը Մետեօրոն թ. 573 ձեռագրում: Այդպիսավ Մարիէսը հսարաւորութիւն ունեցու որա հետ համեմատելու հայերէն և վրացերէն թարգմանութիւնները և լուծելու բանասիրական մի քանի հարցերը, սրոշելու հայերէն երկու ձեռագրերի, վրացերէն թարգմանութեան և յունարէն սկզբնագրի գիտական արժեքները և փախյարարերութիւնը:

նախ՝ վաստերով դարձեալ համատաեց և հիմնաւորեց, որ վրացիրէն թարգմանութիւնը հարազատաօրէն կատարուած է հայերէնից:

Երկրորդ՝ սառւզումներով պարզեց, որ Խառնակի և Յակորի օրհնութիւնների մեկնութեան հայերէն թարգմանութեան երւոսպէմեան թ. 347 ձևոազիրն անօրէք է և յաւնարէն սկզբնազիրը սրբազրիւ կամ վերականգնելու համար անօգուտ է, որովհետեւ համառաւուած թարգմանութիւն է և հնուա և ամրագիտական և սասայգ թարգմանութիւնից, որ լրիւ պահպանուել է վեհափիկեան հայերէն ձևոազրում: Բարերարութարար հայերէն այս ձևոազրի ընտանիքի բնազրից է կատարւել վրացիրէն թարգմանութիւնը, որ յաւնարէն սկզբնազիր հետ զայիս է դարձեալ համատաելու նրա բնազրի հնականաւութիւնը և ամրագչականութիւնը:

Երրորդ՝ հայերէն և վրացիրէն ամրագիտական թարգմանութիւններն իրենց հերթին ցայց են տալիս, որ Խառնակի և Յակորի օրհնութիւնների մեկնութեան յաւնարէն սկզբնազրում կատարւել են բնգմիջարկութիւններ, որոնք առելի չուա չորրորդ դարի տասաւծաբանական դրայթներից են բխում, քան ողոտկանում երրորդ դարի առաջին քառարդի մեկնութեան Հիփոպիտոսուին: Աւասի, հզրակացրել է Մարիկուր, հայերէն ամրագիտական թարգմանութեան յաւնարէն նախօրինակը առելի հին է եղել, քան յայտնաբերուած Meteōron թ. 573 ձեռազրի բնազրիր, որի բնգմիջարկութիւններից զերծ է հայերէնը: Այսունզենիր Մարիկուր այս յօդաւածում այն միտքն է արտայայտել, թէ յայտնաբերուած յաւնարէն սկզբնազիրը երկրորդական գծի վրայ է մզում հայերէն թարգմանութիւնը: Սակայն 1954ին, գիտական հրատարակութեան նախարարուած (Եջ Բ) նոտ գրել է «Մենք այսօր շնոր տաի, ինչպէս գրել ենք 1933ին, թէ Խառնակի և Յակորի օրհնութիւնների յայտնաբերուած յաւնարէն սկզբնազիրը երկրորդական գծի վրայ է մզում հայերէն թարգմանութիւնը: Յաւնարէն այն սկզբնազիրը, որից կատարւել է հայերէն թարգմանութիւնը, չառ անդերում առելի լու է եղել, քան Meteōron թ. 573 ձեռազրիրը»: Անշաւշտ տարիների բնթացքում նուակի մանրամասն էր ուսումնասիրել յաւնարէն բնազրիր և հայերէն թարգմանութիւնը:

Մովսեսի օրհնութիւնների մեկնութեան յաւնարէն սկզբնազիրը չայտնաբերուեց: Աւասի Մարիկուր ստիպուած էր բաւարարուել հայերէն երկու թարգմանութիւնները և վրացիրէն թարգմանութիւնը համեմակալ միմեանց հնաւ: Դարձեալ համատառել է, որ այսակ էլ հայերէն լուսակայն ձևոազրիրը վենեսիկեանն է, ինչպէս Խառնակի և Յակորի օրհնութիւնների մեկնութեան տեսակետից: Այսպիսով հայերէն թարգմանութիւնը, որից կատարւել է վրացականը, անվերաբանութէն տառաջնակարգ աշանտկութիւն ունի, քանի որ յաւնարէն սկզբնազիրը զի՞ յայտնաբերուած չէ:

Յօվուածի երկրորդ մասում Մարիկուն առումնասիրել է նկարազրաւուած հայերէն երկու ձեռազրերի պարաւնակում միւս գրուածքները և վեր հանել որանց կարեորաւթիւնը հայ մատենազրութեան և հայրաբանական գրականութեան համար: Այդ գլուքաւթիւնները» լինազաց, Ելից և Պետական գրքերի մեկնութիւնների թարգմանութիւններ են: Ամիջի այլաց, նու փաստերսի փորձել է ապացուցել, թէ Երաւառզէմի ձեռազրի 50-58 թերթերում Փ կամ ՓԲ յալպաւումը ոչ թէ Փիրմիլիանոսի, այլ

Եփրեմի անուանն է: Նոյն ձեռագրաւմ Եղեկիէլի մարգարէութեան մեկնութիւնները վերագրաւած հն կիւրեզ Ազեքաւնդ բացաւն: Եթէ այս վերագրաւմը ստուգուի, ապա դա մեծ նպաստ է հայրաբանական գրականութեան համար, արովհեաւ այն կարծիքն է արաւայտուած, թէ այս հեղինակը Եղեկիէլի մեկնութիւններ չի գրել: Զեռագրային այս վկայութեան աւելանում է Օքսֆորդի Բոգլիան թ. 71 հայերէն ձեռագրի տեղեկութիւնը և, բացի գրանից, նոյն մեկնութիւնը լրիւ պահպանուած է նաև Նախկինում Էջմիածնի մատենագրարանի թ. 1293 ձեռագրում: Այս բոլորով հանգերձ Մարիէսը գտնում է, որ հարցը կարօտ է մանրազնին քննութեան, և գրանից յետոյ միայն և թէ համագայ ուսումնասիրութիւնն ապացուցի այդ մեկնութիւնների կիւրեզեան հեղինակութիւնը, ապա հայ հին գրականութիւնը մի անգամ ևս աւանդ թողած կը լինի եկեղեցու շատ կարեար հայրերից մէկի մեկնութիւնը, որ յոյն մատենագրութեան մէջ չի պահպանուել» (էջ 33):

Իր այս ուսումնասիրութեամբ Մարիէսը վեր հանց հայրաբանական գրականութեան համար հայ հին մատենագրութեան ունեցած նշանակութիւնը, որ գործնականում հաստատեց, երբ, իր այս բանասիրուկան լուրջ աշխատանքից յետոյ, երկու այլ բանասէրների աշխատակցութեամբ, 1954ին լոյս ընծայեց Խանճակի, Յակոբի և Մագսէսի օրհնութիւնների մեկնութեան յունարէն մատենակի սկզբնագիրը, հայերէն և վրացիրէն հին թարգմանութիւնները, որոնց կցուած են նրա Փրանսիարէն փոխադրութիւնը և բազմաթիւ ծանօթագրութիւնները: Այդպիսով նու էլ իր աւանդը թողեց հայրադիտական անգամանում: Այս քննուկան հրատարակութեան մասին խօսելուց առաջ տեսնենք նրա այս յօդուածի մոսին գրուած հետեւել առղերը:

Փիւլ Լբրերոն (Jules Lebreton) Մարիէսի ուսումնասիրութիւնը շատ համարու ներկայոցը և “Recherches de Science religieuse” հանգէսի մէջ, հատ. 26, 1936, էջ 203-204: Այս աշխատանքի մասին նա ոչ մի կարծիք չի յայտնել: Հեշտել է միայն, որ Մարիէսի ուսումնասիրութեան երկու ձեռագրինը պահպանել են հայրաբանական գրականութեան համար կարեար մի գործ՝ Հիպողիասոսի մեկնութիւններ: Նու էլ ընդգծել է, որ Հիպողիասոսի այս գործի հայերէն թարգմանութեան պահպանումը արժէքաւոր է, քանի որ Խանճակի և Յակոբի օրհնութիւնների մեկնութիւնների բնագիրը թէ և յայտնաբերեալ է, բայց հայերէն թարգմանութիւնը մեծապէս օգնում է, որ սկզբնագիրն սասւգուի շատ անդերում: Խոկ Մովիւսի օրհնութիւնների մեկնութեան սկզբնագիրը գեռ անյայտ է, և հետեւաբար հայերէն թարգմանութիւնը գրա փոխարինողն է:

9. Hippolyte de Rome. Sur les Bénédicitions d'Isaac, de Jacob et de Moïse, Sur les Bénédicitions d'Isaac et de Jacob: texte grec; Versions arménienne et géorgienne. Sur le Bénédicitions de Moïse: Versions arménienne et géorgienne. Traduction française résultante et notes. Par Maurice Brière, Louis Mariès, B.-Ch. Mercier. PO, T. XXVII, fasc. 1 et 2, Paris, Firmin-Didot, 1954.

Հիպողիասոս Հոռմայեցի, Խանճակի, Յակոբի և Մովիւսի Օհնութիւնների մասին: Խանճակի և Յակոբի օրհնութիւնների յունակենքաղիր, հայերէն և վրացերէն բարգմանութիւններ: Մովիւսի օրհնութիւնների հայերէն և վրացերէն բարգմանութիւններ: Ֆրանսերէն համապատաս-

խոնիցուած քարզմանուրին: Աշխատասիրութեամբ Մարիս Բրիէրի, Լուի Մարիէսի, Բ. - Շ. Մերսիէի:

Կործում ենք, որ այս երկար վերնագրի մէջ անհրաժեշտ է «Մհկնութիւն» բառը. իր այս գրուածքի մէջ Հիպողիսոս Հասմայեցին մհկնորոնել է նշաւած օրհնութիւնները:

Նախարանում Մարիէսը նշել է, որ մեկնութեան հեղինակն իրօք Հիպողիսոսն է: Բայց այն ժամանակ բանագիծի հն հեղինակի ինքնութեան մասին. առ իսկապէս հասմայեցի է, ինչպէս անունն է առում, երբորդ գարի հեղինակ, թէ արեւելքի է եղել բայց դարձեալ երրորդ գարից, ինչպէս կարծում են մասնք: Առանց այս հարցերը մասնաւոնքնելու, Մարիէսը բաւարարուել է նրան կոչելով «Հիպողիսոս Հասմայեցի»:

Վերևում մեր ներկայացրած բանասիրական ուսումնասիրութեամբ, ուր քննարկուած են իսանակի, Յակոբի և Մազէսի օրհնութիւնների մասին Հիպողիսոս Հասմայեցու գրած մեկնութիւնների հայերէն ձեռագրերը, Մարիէսը նախապատրաստել է այդ այս մեկնութիւնների մի մտո՞ւ խանուկի և Յակոբի օրհնութիւնների յաւնարքն ընագրի, հայերէն ու վրացերէն հին թարգմանութիւնների, և երկրորդ մտո՞ւ միայն Մազէսի օրհնութիւնների հայերէն ու վրացերէն հին թարգմանութիւնների, (յաւնարքն ընագիրը զիս յայտնաբերուած չէ) այս զեղեցիկ հաստարակութիւնը, որին աշխատակցի են, բացի Մարիէսից, վրացագէտ Մարիս Բրիէրը և հայոգէտ ու վրացագէտ Շարլ Մերսիէն՝ Մարիէսի աշակերտը:

Հրատարակութեան նախարանում Մարիէսը նշել է, թէ երեք աշխատակիցներից իւրաքանչիւրն ինչ աշխատանք է կատարել:

Բրիէրը հրատարակութեան է պատրաստել Մեկնութիւնների վրացերէն դաստիկան թարգմանութիւնը, որ կատարուած է ժամանակին հայերէնից. ձեռագրական տարբնթերցաւածները նշանակելուն օգնել է Շարլ Մերսիէն:

Մերսիէն հրատարակութեան է պատրաստել Մեկնութիւնների հայերէն թարգմանութիւնը, վեհնեաիկի թ. 352 ձեռագրից, ձեռագրային տարբնթերցաւածներով: Նու է կատարել նուև յաւնարքն ընագրի և վրացերէն թարգմանութեան ձեռագրական համեմատութեան և այլընթերցուածները նշանակելու աշխատանքը, կազմել ընագրի, վրացերէն և հայերէն թարգմանութիւնների յատաւկ անունների, սուրբգրական մէջբերումների, ուղղագրական տարբերակների ցանկերը և, վերջապէս, հոկել տարագրաւթեան տաճաննելի գործին: Եթու գրչին է պատկանում հրատարակութեան ընդունակութեամբ նկատման մհծագոյն մասը:

Մեկնութիւնների յաւնարքն և հայերէն ձեռագրերի նկարագրութիւնից բացի, Մարիէսի գրչին են պատկանում նուև մեկնութիւնների ֆրանսիէն թարգմանութիւնը և 430 ծանօթագրութիւնները: Նախարանում յայտարարում է, որ թարգմանական աշխատանքը և ծանօթագրութիւնները մհծագէս շահել են Մերսիէի օգնութիւնից:

Երկու գլխից բաղկացած ընդունակութեամբ մէջ ներածութեան մէջ հրատարակիչները համարուաներկայացրել են մեկնութիւնների առաջին գրքի, այսինքն՝ իսանակի և Յակոբի օրհնութիւնների մեկնութեան, և ամբողջի, այսինքն՝ առաջին և երկրորդ գրքերի հայերէն և վրացերէն թարգմանութիւնների ձեռագրերի և Աստուածաշնչից կատարուած հայերէն և յաւնարքն մէջբերութեամբ հետ կապուած բանասիրա-

կան հարցերի իրենց ուսումնասիրութեան որդիւնքները, որոնց վրայ պէտք է կանգ առնել:

Վերջիշխնում ենք, որ Հիպողիտոսի այս մեկնութիւնները շաբարգուած են եզել յաւնարէն և բազկացած երկու մասից կամ գրքից՝ 1. Միկուրինու Բանակի և Յանորի օհնութիւնների մասին և 2. Սովուսկի օհնութիւնների մեկնութիւնների մեջութիւններ։ Պահպանուի է միայն առաջին գրքի յաւնարէն բնագիրը (Զեռ. Météores 573, Փ գ.), որ յայսարերուել է մեր զարտազգրին և առաջին առաջամ հրատարակուել 1911թ., Լուսպիգում (Texte und Untersuchungen, հրատարակիչներ՝ Constantin Diabouniotis և N. Bečis), իսկ երկրորդ գիրքը պահպանուել է միայն հայերէն և գրացերէն թարգմանութիւններով։ Ֆրանսիացի բանասէր երեք հրատարակիչներն օգտագործել են վերջիշխալ հրատարակութիւնը։ Քանի որ չեն կարստացել ձեռք քերել բնագրի լուսավառաձնումը կամ մանրածավալնը Պարզուել է, որ պահպանուած յաւնարէն բնագիրը բաւականին արտառար է և այս հրատարակութեան մէջ որպէս շափով ճշտուել է հայերէն թարգմանութեան բնթերցուածների հիման գրայ։ Վրացերէն թարգմանութիւնը կատարուել է հայերէնից այս մասին ուելի մանրածան կը խօսենք սասրեւ Բնագրի որբագրութեան ուղղութեամբ կատարուած ողջ բանասիրական և բնագրագիտաց կան աշխատանքը նշուած է առաջարկում և ծանօթադրութիւնների մէջ։

Եկրածութեան մէջ. էջ 5—6., Ծ. Մերսիկն ներկայացրել է յաւնարէն բնագրի մէջ գերմանացի տառջին հրատարակիչների և հայերէն թարգմանութեան հիման գրայ։ Մարիկոի կատարուած որբագրութիւնների ցանկը։ Բնագրացին բարեր յաւելութեար տարագրուած են որպանկիւն վակագծերի մէջ։

Եսթ. Բանվեցը գերմաններէն թարգմանութեան մէջ գետեղել է նուե այս մի քանի համաւածների թարգմանութիւնը, որ վերագրել է Հիպաղիտոսին։ Համաւածները քննելուց և մեկնութիւնների հետ համեմատելուց յահաց, Ծ. Մերսիկն եղբակացրել է, թէ զրանք չշեն համընկնուած մեկնութիւնների հետ, գրանց մաս չեն կազմում, ուստի և չեն մտել այս քննական հրատարակութեան մէջու։

Լուի Մարիկու համաստ ձեռով գարձեալ ներկայացրել է ամբողջ մեկնութիւնների հայերէն բարգմանութեան երկու ձևերը, որպէս միահամբեկ թ. 352. գրչագրուած մի բարի երկրորդ կիսում, պակասուած հն մի քանի էջեր բնագիրը շատ լու չէ։ 2. Միայն Ասպէսի օրհնութիւնների մեկնութիւն՝ «Երուսաղէմ» 347», միւ—միւ զրանք բնագրիր նախարզ ձեռագրի շամբ լու չէ։ Թէև միհնետիկի ձեռագրի 364—365 էջերի միջին պակասուզ համաւածն այս ձեռագրում պահպանուել է, այժմաւնդ երձ սրանազ չի վերանում այս ձեռագրի բնագրացին թերին։ Հիպաղիտոսի մեկնութիւնները լրիւ հն զատնուած միայն յաւնարէն բնագրի և հայերէն թարգմանութեան չնորհիւ։ Հայ թարգմանիչը շատ հարազատ է մեացել յաւնարէն բնագրին։

Վրացերէն բարգմանութիւնը պահպանուել է չորս ձեռագրուած։ Թիֆլիս թ. 1141, Թիֆլիս թ. 165, Երևանագէմ թ. 44, Երևանագէմ թ. 74, Հրատարակութեան համար օգտագործուած են Թիֆլիս թ. 1141 (965—970) թթ.) և Երևանագէմ թ. 44 (միւ—միւ զրանք ձեռագրիր լուսապատճենները։ Մարիկոի կարծիքով, Երևանագէմի ձեռագրիրն առաջինց աւելի լու է բնագրի ճշտութեան տհամեկարից։ Թէև երկու ձեռու

գրեթից մէկը միւսից չի ընդօրինակուել, բայց երկուսն էլ ենթադրել են տուիս հայերէն մէկ հիմք, որից կատարաւել է վրացերէն թարգմանութիւնը. դա երեսմ է վրացերէն նախագտառութիւնների կառաւցաւածքից, բառապաշտրից և երկու ձեռագրերին յատուկ գրչագրութն սխալներից:

Համեսայ փառակերից ելնելով՝ Շ. Մերսիէն կասկածից վեր է համարում, որ վրացերէն բարգմանութիւնը նայելուից է կատարուն.

1. Խառնակի և Յակորի օրհնութիւնների մեկնութեան յունարէն քնազրի համեմատաւթեամբ, նկատում են նոյն հատուածների թարգմանութեան պակասութիւն և արոշ հատուածների հաւետառջութիւն հայերէն և վրացերէն թարգմանութիւնների մէջ (ոսյն հրատ., էջ 4-5):

2. Հայերէն և վրացերէն երկու թարգմանութիւններն էլ զերծ են յունարէն բնագրի ընդմիջորկութիւններից, որոնց մի մասը յիշատակուել է գեղես առաջին հրատարակիչների՝ կասզանտին Դիմրունիոտիսի և Ե. Բէխոի կողմից:

3. Արոշ ընթերցուածներ, որոնցով հայերէն թարգմանութիւնը տարրերում է յունարէն բնագրից, առկայ են նուև վրացերէն թարգմանութեան մէջ:

4. Վրացերէն թարգմանութեան մի սխալ՝ օրինակ՝ ոսյն հրատ., էջ 38, ա. 6, հասեանք է նրան, որ վրացի⁽⁶⁾ թարգմանիչը հայ. լրաւի բառը, որով ճիշտ է թարգմանուել համապատասխան յունարէն բառը, հոււնարար կորդացին է լուրբ-ն և թարգմանիլ ըստ այսմ:

Միւս կողմից՝ Շ. Մերսիէն ապացուցել է նուև, որ վրացերէն թարգմանութիւնը թէ հայերէնից է կատարուած, բայց ոչ վենիսիկ թ. 352 ձեռագրից: Փաստեր. 1. Յունարէն բնագրի համեմատաւթեամբ, հայերէն այս ձեռագրից (կամ նրա նախատիպից) գուրս ընկած արոշ բառերի համապատասխան թարգմանութիւնը կայ վրացերէն թարգմանութեան մէջ։ 2. Վրացերէնի արոշ ընթերցուածներ համապատասխան հն յունարէն բնագրին՝ հակառակ վենիսիկ թ. 352 ձեռագրին (գոնէ վերջինիս արգի վիճակում): Սակայն այս երկու փառակերից ելնելով՝ չգետք է կարծել, թէ վրացերէն թարգմանութեան վիճակն աւելի լուէ, քան հայերէն նշուած ձեռագրինը: Ենթածութեան ովրացերէն թարգմանութեան արժէքը հատուածում (էջ 21-22) Շ. Մերսիէն հինգ գրւիսուոր կէտերում ցայց տալով հայերէն թարգմանութեան առաւելութիւնները, եղբակացրել էր ովրելի է ուրիմն ասել, որ վրացերէն թարգմանութիւնը, բացի մի քանի ընթերցուածներից որոնցով լրացւում են հայերէն թարգմանութեան թերի տեղեր կամ ճշտում սխալ ընթերցուածներ, Հիպոկիսոսի երկի խիստ անբաւարար թարգմանն է։ Ներածութեան 2 րդ գլխում Շ. Մերսիէն ուսումնասիրել է Աստաւածաշնչի մէջ թերումների խնդիրը մեկնութիւնների յունարէն բնագրում և հայերէն թարգմանութեան մէջ։ Եղում է, թէ յունարէնից կամ ասորերէնից թարգմանութիւններ կատարելիս, Աստաւածաշնչի մէջ թերումների հարցում հայ թարգմանիչներն ընդհանրապէս վարուել են երկու ձեռագ. Ամանք վերստին են թարգմանիլ յունարէն կամ ասորերէն բնագրերում հանդիպող մէջ թերումները՝ հարազատ մետրով թարգմանելի երկին: Ուրիշներ մէջ թերումների թարգմանութեան համար գիշել են իրենց ժամանակ զայտութիւն ունեցող Աստաւածաշնչի հայերէն ընդհանուած թարգմանութեանը. այսպէս է, օրինակ, Յագի. Ասկերերանի հայ թարգմանիչը:

Հաստ այն բանի, թէ հայ թարգմանիչը Հիպողիտոսի մեկնութիւնների թարգմանութեան ժամանակ ինչպէս է վարուել մէջրերումների հարցում, նրա թագուծ զրաւոր թարգմանական վկայութիւնը կարու է տարրեր եղբակացութիւնների հանդիցնել: Եթէ նա հարազատ է մնացել իր ժամանակի հայերէն Աստուածաշնչին, և եթէ նրա թարգմանութիւնը տարրերում է Գրքի այժմ բնդունուած հայերէն թարգմանութիւնից (Զահրապետն հրատարակութիւն), ապա դա մի արժէքաւոր վկայութիւն է հայերէն Աստուածաշնչի սկզբնական տարրերուկի մասին: Խոկ եթէ Հիպողիտոսի հայ թարգմանիչը վերտանի ինքնուրուցնարար թարգմանել է Աստուածաշնչի մէջրերումները, ապա նա մեզ հետաքրքրու հայոգիտական հարցի վրայ լոյսի նշոյլ չի սփռի: Դա պարզապէս նշոնակութիւն կ'ունենայ հայոց լեզուի տեսուկէալից, կը վկայի Հիպողիտոսի օգտագործած Գրքի բնագրի մասին և մի միջաց կը լինի սառազիւու: Նրա յունարկին մէջրերումները, որովհետեւ մեկնութիւնների յաւնարէն բնագիրը կրել է փափախութիւններ, մասնաւոնդ մէջրերումները ենթարկուել են սորբագրութեանց:

Ը. Մերսիէն, զաւգանեսարար քննելով իսահով իսահովի և Յակոբի օրհնութիւնների մեկնութիւնների ուուրգրական յաւնուրէն և հայերէն մէջրերումները, համեմատելով աւետարանների և Հին Կատկարանի յաւնարէն բնագրի և Զահրապետնի հրատարակութ հայերէն թարգմանութեան հետ, եղբակացը է հայերէն առբագրութեամբ, մերթ ինքնուրույն:

Զ. Հայ թարգմանիչը հաւատարմօրէն է թարգմանել նրա մէջրերումները, և հայ գրիչները նոյնութեամբ բնագրի ինպակել են նրա թարգմանութիւնը: Հատեարար Հիպողիտոսի մեկնութիւնների կատկարանային մէջրերումների հայերէն թարգմանութիւնները լրիւ շեն լուսաբանում հայերէն Աստուածաշնչի սկզբնական տարրերուկի հարցը: Մնաւմ է գրանք հիմք բնդուննելով՝ սրբագրել մեկնութիւնների յաւնուրէն բնագիրը, որ հետագաւում ենթարկուել է խերագրման և ազաւազաւել է ընդմիջորկութիւններով: Առկայն այս առիթով Մերսիէն փաստացի նկատել է առլիս երկու բան.

1. Հիպողիտոսի մէջբերումների հայերէն թարգմանութիւնների շարանիւսութիւնը, բառապաշտրն ու ոճը գտանկանութեան տեսակէալից զիջում են Գրքի հայերէն աւանդական թարգմանութեանը:

2. Զափագանցութիւն կը լինէր տաել: թէ մեկնութիւնների հայերէն թարգմանութիւնը լիսվին զերծ է մնացել փափախութիւնից: Եւ իրօք, որոշ մէջրերումների հարցում այն համապատասխանում է Գրքի Զահրապետն հրատարակութեան հայերէն բնագրին, հետանալով Հիպողիտոսի բնագրից: ուստի զգալի է այն ժամանակի հայերէն Աստուածաշնչի ազգեցութիւնը Հիպողիտոսի թէ հայ թարգմանչի և թէ գրիչների վրայ: Առկայն միւս կողմից, զգուշացնում է Մերսիէն, Հիպողիտոսի բնագրի և հայերէն թարգմանութեան որոշ կէտերի անհամապատասխանութիւնը թերեւ հետեւնք է հենց Հիպողիտոսի յաւնուրէն բնագրի հետագայ փափախման, և թէ նրա սկզբնական տարրերուկում մէջրերում էր Գրքի յաւնուրէն այն նոյն բնագրիրը, որից թարգմանութել է հայերէն Աստուածաշնչը: Այդ զէտքամբ գրանով կը բացատրաւէր մի կազմից Հիպողիտոսի բնագրի և հայերէն թարգմանութեան և միւս կողմից՝ Հի-

պողիտոսի հայերէն թարգմանութեան և հայերէն Գրքի համաձայնութիւնը:

Կտակորանային որոշ մէջբերումներ մեկնութիւնների յունարէն բնագրի մէջ կրկնուել են մի քանի անգամ նոյն բառերով, բայց հայերէն թարգմանութեան մէջ ամէն անգամ թարգմանուել են որոշ տարբերակներով. այսպէս՝

1. Անիծեալ բարկուրիւն նոցա՝ զի նպարտ, եւ ցտումն նոցա՝ զի խիս և.

2. Անիծեալ ցառումն նոցա՝ զի նպարտ, եւ բարկուրիւն նոցա՝ զի խիս.

3. Անիծեալ ցառումն նոցա՝ զի նպարտ, եւ բարկուրիւնն, զի խսացաւ:

Ծ. Մերսիէն նոյն մէջբերման այս թարգմանական չնչին տարրերութիւնները բացատրում է գրաբարին յատուկ պէսպիսութեամբ: Աւստի այս գէպքում հայերէն թարգմանութիւնից ելնելով՝ ճիշտ չէր լինի ենթագրել, թէ Մովսէսի օրհնութիւնների մեկնութեան չպահպանուած յունարէն բնագիրը ևս ներկայացրել է մէջբերումների պէսպիսութիւն:

Շ. Մերսիէն կատարել է հայ թարգմանչի լեզուի և թարգմանչական վարպետութեան ուսումնասիրութեան մի փաքրիկ փորձ:

Ինչպէս ասուեց, Մարիէսն է մեկնութիւնները թարգմանել ֆրանսերէն: Նա օգտական է վրացագէտ Բրիէրի՝ վրացերէն հին թարգմանութեան ֆրանսերէն փոխադրութիւնից, ինչպէս նաև Մովսէսի օրհնութիւնների մեկնութեան ֆրանսերէն թարգմանութիւնից կամ, աւելի ճիշտ, թարգմանական փարձից, որ կատարել էր Գարրիէլ վրդ. Պայտեանը (որ ժամանակին ընդօրինակել է նաև հայերէն բնագիրը), և Նաթ. Յանգիչի՝ մեկնութեան ուսուերէն թարգմանութիւնից կատարած գերմաներէն թարգմանութիւնից և ծանօթագրութիւններից (Texte und Untersuchungen, XI, Leipzig, 1904): Նա աշխատանք է հարազարտ մնալ յունարէն բնագրին և հայերէն ու վրացերէն հին թարգմանութիւններին՝ խօսակի և Յակոբի օրհնութիւնների մեկնութիւնը ֆրանսերէն թարգմանելիս, միւս կողմից՝ հարազարտ մնալ նրանց ոճին, որքան ներում էր ֆրանսերէն լեզուն: Մեկնութեան այս առաջին գրքի նրա ֆրանսերէն թարգմանութիւնը հնարաւորին չափ համաձայնեցուած է յունարէն բնագրի և երկու թարգմանութիւնների հետ: Աւստի ճիշտ չէր լինի այսակազմանջնել, որ հայերէն հին թարգմանութեան ճիշտ արտացոլումը լինէր: Հայերէն հին թարգմանութիւնից ինչ որ ֆրանսերէնի փոխադրուած չէ, քննարկուած, թարգմանուած և մէջբերումների գէպքում Աստուածաշնչի յունարէն և հայերէն թարգմանութիւնների հետ համեմատաւած է հարիւրաւոր ծանօթագրութիւնների մէջ:

Ինչպէս ասել ենք, Մովսէսի օրհնութիւնների մեկնութեան յունարէն բնագիրը գեռ յայսնաբերուած չէ: Աւստի Մարիէսը ֆրանսերէն թարգմանութիւնը կատարել է պահպանուած հայերէն հին թարգմանութիւնից, և այսակազմանութիւնը նրա թարգմանութիւնը պէտք է արտացոլի այդ հայերէն բնագիրը, որ երբեմն լրացրել է վրացերէն աւելի ճիշտ ընթերցուածներով: Մեր համեմատած էջերը ցոյց տուեցին, որ թարգմանութիւնն ընդհանուր առմամբ յաջող է և առաջին իսկ ընթերցումից աւելի հասկանալի է, քան Եղնիկի նրա ֆրանսերէն թարգմանութիւնը, որի մասին տե՛ս ստորե իր տեղում: Կարծում ենք, պատճառն այն է, որ Հիպոգիտոսի թարգմանութեան մէջ Մարիէսը ֆրանսերէն լեզուի շարահիւասկան և շարագաւասական օրինաչափութիւնները չի զոհել հայերէն թարգմանութեան շարագաւասութեանը:

իր թարգմանութեան մասին Մարիէսը նոխաբանում գրել է. «Թարգմանութիւնու միայն մի փոքր է, որով կ'աւգենացինք օգնել հետազոյ թարգմանիչներին, որպէսզի աւելի լուն անեն» (Էջ Գ.):

Կարծում ենք, որ ահղը չէ մանրամասն քննութիւնից անցկացնել Մարիէսի թարգմանութիւնը:

Անօր սրբարինեւը արաւոցում են Մարիէսի բանասիրական, բնոգրագիտական մանրակիրկիտ և չոտ լուրջ աշխատանքը, որ հիացմունք է պատճառում: Աւրախ ենք, որ համակողմանիօրէն պատրաստուած եւրազոցի բանասէրը ձեռնամաւխ է կղել, և ինչպիսի՞ զիատկութեամբ. մեր թարգմանական մատենագրաւթեան այս երկի բնոգրի գիտական հրատարակութեան, ֆրանսիրէն թարգմանութեան և բանասիրական քննութեամբ: Մասնօթագրութիւնները օգնում են ընթերցողին ճիշտ ըմբռնելու, որքան որ կարելի է, Հիպոգիառու Հռամայիցու մեկնողական միաբար: Դրանք օգտակար կը լինեն յաւագէտ, հայոգէտ ու վրացոգէտ բանասէրներին և լիգուարաններին:

Ափսոսալի է միայն, որ ծանօթագրութիւնների հերթական համարները նշուած են միայն ֆրանսիրէն թարգմանութեան մէջ: Անպայման պէտք է լինէին նուե բնագրերի համապատասխան տեղերում, որովհետեւ շատ անգում վերտրերում են բնագրի որեւէ ընթերցաւածի քըննարկման, յատկապէս հայերէնին: Դժբախտաբար Մարիէսը նոյնը արել է նուե եղնիկի բննական հրատարակութեան մէջ, ինչպէս կը տեսնենք յանուանութեան:

Արդէն առիթ ունեցանք տաելու, այսուղ չեշտենք. որ յունարեն բնագրի (միայն իսանակի և Յակոբի օրհնութիւնների մեկնութեան) եւ նոյնին ու վրացերեն բարգմանութիւնների հրաժարական կատարուած է ըստ գիտական բանասիրութեան պահանջների՝ այլրութերցաւածների նշանակմամբ, որբագրութիւնների տպագրութեամբ որանկիւն փակագծերում և պատճառաբանութեամբ ծանօթագրութիւնների մէջ, բնագրերի առաջամամբ ևայլին: Հրատարակութիւնը լոյս է տեսիլ “Pathologia Orientalis” մատենաշարի հանդիպակաց մեծագիր էջերում, որով մէկ հայեցքով կարելի է ընդգրկել յաւնաբէն բնագիրը (ուր որ կա), նրա ձեռագրական այլրութերցաւածները, հայերէն ու վրացերէն թարգմանութիւններն իրենց գիտական մասսվ, ինչպէս նուե Մարիէսի ֆրանսիրէն թարգմանութիւնը: Տպատկում նշուած են սուրբգրական մէջըրերումների տեղերը: Տպագրութիւնը մաքուր է և վրիպակներից զերծ, մի բան, որ շատ գովելի է օտար բնագրերի եւրապական հրատարակութեան համար:

Այս հրատարակութիւնը արժէքաւոր տւանգ է ոչ միայն յաւնական, վրացական, այլև հայոգիտական գտնաւարանում, բանասէրի համար ուսանելի շատ կողմէն ունի: Հայտպիտութիւնը պէտք ունի այսպիսի քանուական հրատարակութիւնների, թէկուզ եթէ խստապահանջը բանուաէրը որոշ թերութիւններ գտնի գրանցում, ինչպէս երեսւմ է Ե. Ակինհանի հասեւալ գրախօսութիւնից այս գնահատելի հրատարակութեան մասին:

Գրախօսութիւն

Երեք բանասէրների այս գեղեցիկ հրատարակութեան մասին Հ. Ալիբեանի գրի և զերմ գրախօսական («Հանդէօ Ամսորիայ», 1954, էջ 602-604):

ինչպէս առացինք, Մարիէսը նկատի է ունիցել մեկնութեան միայն երկու ձեռագիր: Ն. Ակինեանը նկատել է առաջիս, որ նրա ուշագրաւթիւնից վրաիպել է Երաւանչէմի Ա. Յակոբիանց վանքի թ. 1164 ձեռագիրը, որի մէջ նայնպէս պահպանված է այս գրաւծքը:

Գրառիսօսագիրը հրատարակեալինաւ մենան ներածաւթիւնը որակաւէ և որպէս «Տայճացիքա ու ուսումնասիքութիւն»:

Մորիկոս մեկնութեան հայերէն թարգմանութեան ժամանակի մեջ թարգրեած յատակ բաց չէր առել։ Եւ Ակինհանիք այս մասին գրել է. «Կը թուի ինձ, թէ թարգմանիչը երաւաղէմեան Գալրոցին կը պատկանի, կատարած իր թարգմանութիւնը և զարու վերջին քառորդին, յամենայն դէպո 580էն տառջ, վասն զի չի վերտարերիր գատական շրջանին և ոչ ու ծանօթ է յունատան Գալրոցի նորակիրա բաներու և մասնիկներու։ Ան վարդ թարգմանիչ չէ. չէ նուի քաջագործ աշակերտ սուրբ գրենական ուսմանց և մայրենի փառակին» (էջ 603-604)։ Եւ նու ըիրում է թարգմանութեան մէջ գարծածուած բառեր, որոնք սուկեզարեան չեն։

Հրատարակութեան մասին տուուած է. «Ամէն խնամք տարաւած է թէ՛ բնագիրներու գիտեան հրատարակութեան և (թէ՛) անօխոլ տպագրութեան համար . . . Ամէն յարգանք աշխատասէր վաստեկաւը բներուն, որոնք ձեռն ի ձեռն տուուած կը գնեն գիտնոց սկզբնի վրայ բազմազմանի ուսումնասիրուած բնագիր մը, որ օրինակելի է» (Էջ 604):

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԵԴԱՎԵԼԻ

Grundwirkf